

Համարը	N 1	Տեսակը	Մայր
Տիպը	Պաշտոնական պարզաբանում	Կարգավիճակը	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2006.02.01/4(213)	Ընդունման վայրը	Երևան
Ընդունող մարմինը	Տրանսպորտի և կապի նախարար	Ընդունման ամսաթիվը	20.01.2006
Ստորագրող մարմինը	Տրանսպորտի և կապի նախարար	Ստորագրման ամսաթիվը	20.01.2006
Վավերացնող մարմինը		Վավերացման ամսաթիվը	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.02.2006	Ուժը կորցնելու ամսաթիվը	

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ**

20 հունվարի 2006 թ.

N 1

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի համաձայն՝ փոստային կապի ծառայությունները ենթակա են լիցենզավորման:

Փոստային կապի ծառայություն է համարվում նաև փոստային առաքանու ընդունման, մշակման, փոխադրման և հանձնման գործողությունը կամ գործունեությունը՝ պարբերականների բաժանորդագրության գծով (օրենքի 3-րդ հոդված):

Այսպիսով, համաձայն օրենքի դրույթների, փոստային կապի ծառայություն, հետևաբար նաև լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է համարվում ոչ թե ուղղակի պարբերականների բաժանորդագրությունը, այլ պարբերականների բաժանորդագրության գծով գործողությունը կամ գործունեությունը:

Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված «փոստային կապ» և «փոստային առաքանի» հասկացությունները, որոնք ընդհանրապես բուն պարբերականների բաժանորդագրության հետ որևէ առնչություն չունեն:

Այսպես, փոստային կապը՝ փոստային առաքանու մշակումը, փոխադրումը և հանձնումը ապահովող կապի տեսակ է, իսկ փոստային առաքանին՝ հասցեագրված նամակագրական թղթակցություն, փոստային ծանրոցներ ու բեռնարկեր, համապատասխան փաթեթավորումով տպագիր հրատարակություններն են:

Ստեղծված իրավիճակում տարաբնույթ է ընկալվում «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ պարբերականների բաժանորդագրությունը որպես փոստային կապի ծառայություն և դրա հետ կապված այն լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ համարելու մասով:

Նկատի ունենալով վերը նշվածը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի դրույթներով, պաշտոնապես պարզաբանում են՝

պարբերականների բաժանորդագրությունը փոստային կապի ծառայություն և, հետևաբար, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ չի համարվում:

**ՀՀ տրանսպորտի և կապի
նախարար**

Ա. Մանուկյան